## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Չվող թռչունները չվելիս մեծ հեռավորություններ են անցնում և ժամանակ առ ժամանակ իրենց ճանապարհին իջնում են որոշակի վայրեր՝ հանգստանալու և սնվելու: Թռչունները շատ լավ մտապահում են այդ վայրերը, քանի որ և՛ չվելիս և՛ վերադառնալիս միշտ իջնում են նույն տեղում: Աշխարհի բնապահպանական կազմակերպությունները ուսումնասիրելով տարբեր թռչունների չուն, պարզել են այդ տարածքների տեղերը և պետություններին առաջարկել առանձնացնել դրանք և պահպանել առանց փոփոխությունների: Հակառակ դեպքում թռչունները կկորցնեն իրենց կողմորոշումը և կարող են ոչնչանալ: Մեր հանրապետությունում նման տարածք է Խոր Վիրապ արգելավայրը: Այն գտնվում է Արաքս գետի հին հունի ճահճացած մասում և հարուստ է թռչունների համար ցանկալի կենդանի կերով (մանր ձկներ, գորտեր,) և ճահճային բույսերով:*